ալբանցիներ գնացին Պրիզրենդ իրանց հնազանդութիւնը Թիւրքաց զօրքերի հրամանատարին յայտնելու համար, բայց ազգաբնակութեան մեծամասնութիւնը չէ կամենում հպատակվել և պատերազմ է ցանկանում: Դերվիշ-փաշա յոյս ունի նուաճել Դիակովօ խաղաղ ճանապարհով: Ալբանական այն նահանգների մէջ, որոնք արդէն նուաճված են, զինուորներ են հաւաքում Թիւրքաց ծառայութեան համար: Ալբանական միութեան առաջնորդներից մէկը կալանաւորվեցաւ և բերվեցաւ Դերվիշ-փաշայի մօտ, որ իսկոյն նրան արձակեց: Բացի նրանից նորերումս կալանաւորված է ալբանացի Աբդուլլա-բէյ, որ մի ժամանակ իբրև միութեան հաւատարմատար ճանապարհորդում էր Եւրոպայի մէջ և համոզում էր կառավարութիւններին մերժել Յունաստանին իրանց միջամտութիւնը: Վերջին ժամանակներում ալբանական միութիւնը յանձնեց նրան ուղևորվել Եւրոպա և խնդրել պետութիւնների պաշտպանութիւնը ալբանցիների համար: Որովհետև մի որ և է նաւահանգիստ հասնելու համար նա պէտք է անցնէր Թիւրքիայի հպատակ երկիրներից, այդ պատճառով նա ուղևորվեցաւ իր հագուստը փոխած և առանց արդելքների հանդիպելու հասաւ մինչև Դուբրաց: Նրան ճանաչեցին և կալանաւորեցին այն ժամանակ, երբ պատրաստվում էր նաւ նստել: Աբդուլլա-բէյի մօտ մի քանի գօկումենտներ են գտել, որոնք կասկածելի են դարձնում Թիւրքաց մի քանի բարձրաստիճան անձանց:

Կ. Պոլսից հաղորդում են, որ կալանաւորված Միտհադ-փաշա բերվեցաւ այնտեղ և պահվում է Եալդիզի-կէօշկի մէջ: Նրան կը հարցնեն միւս մեղադրվածների հետ միաժամանակ:

ԱՆԳԼԻԱ

Մայիսի 24-ին անգլիական թագուհի Վիկտորիայի ծննդեան օրն էր: Այդ օրը լրացաւ թագուհու 62 տարին և նրա գահ բարձրանալուց յետոյ 44 տարի: Սրտաքին գործերի մինիստրութիւնը այդ տօնի պատճառով մի քանի բանկետներ տուեց: „Standart“ լրագիրը, գովելով թագուհուն, ցաւակցութիւն է յայտնում, որ նա վերջին ժամանակներում շատ քիչ է երևում ժողովրդին և որ այս տարի նա սովորականից շուտ գնաց ամարանոցը:

Հայդ Պարկի մէջ նշանակված է մի ժողով Իրլանդիայի մէջ գործող ստիպողական օրէնքները դադարեցնելու համար ցոյց անելու նպատակով: Ժողովին կը մասնակցեն իրլանդական պատգամաւորներից շատերը: Սրանք սաստիկ բողոքեցին այն գաղտնի շրջաբերականի դէմ, որ ուղարկված էր իրլանդական պոլիցիային: Այդ շրջաբերականը նախատում է պոլիցիային, ասելով թէ նա բաւական եռանդով չէ գործում:

Համայնքների ժողովի մէջ Պարնել հարց առաջարկեց կառավարութեանը իրլանդական պոլիցիային ուղարկված գաղտնի շրջաբերականի մասին: Ֆոքստեր ասաց, թէ լրագիրների մէջ տպված շրջաբերականի պատճէնը ճիշդ է իսկականի հետ և պատրաստականութիւն յայտնեց պաշտպանել այդ միջոցը:

Դուբլինի մէջ կալանաւորվեցաւ իրլանդական կալուածական միութեան քարտուղար Թոմաս Բրեննան: Նա մեղադրվում է ժողովրդին անկարգութիւն գործելու համար դրդելու և օրէնքը խանգարելու մէջ: Կարծում են, որ դարձեալ կը կալանաւորվեն միութեան մի քանի այլ անդամներ:

„Խաղաղութեան և միջազգային միջնորդ դատարանի ընկերութիւնը“ նորերումս մի նիստ ունեցաւ, որի ժամանակ ժողովը հաւանութիւն յայտնեց Տրանսվաալի հարցի վճռին և որոշեց համակրութիւն յայտնել բրիտանական կառավարութեանը նրա իրաւացի վարմունքների համար արտաքին գործերի վերաբերութեամբ:

„Polit. Corres.“ լրագրին Կ. Պոլսից հաղորդում են, որ անգլիական հիւպատոսը Ցունիսի մէջ դիմեց Կ. Պոլսի անգլիական դեսպան Գօշենին, նրանից հրահանգներ խնդրելով իր ապագայ յարաբերութիւնների մասին թէ Ցունիսի բէյի հետ և թէ Ֆրանսիական մինիստր-ռեզիդանտի հետ: Հիւպատոսը մի քանի անգամ այդ հարցով դիմել է անգլիական արտաքին գործերի մինիստրին, բայց նրանից մինչև այժմ ոչինչ պատասխան չէ ստացել: Գօշեն նոյնպէս դեռ պատասխան չէ տուել անգլիական հիւպատոսին:

Լօնդօնի մէջ կվեստայից մի հեռագիր է ստացվել, որ հաղորդում է, թէ Էյիւբ-խանի և Ափգանիստանի էմիր Աբդուրահման-խանի կուսակից առաջնորդները միմեանց դէմ թշնամական գործողութիւններ են սկսել: Դիրիշկի մօտ մի քանի կռիւներ են պատահել, որոնց ժամանակ Էյիւբ-խանի կողմնակիցները ջարդվել են: Էյիւբ-խան դեռ ևս Հերատի մէջ է գտնվում:

Միտչեստաուէնի մէջ պատահած անկարգութիւնների պատճառն այն էր, որ զօրքերը 250 պոլիցիականների աջակցութեամբ արտաքսում էին մի ֆերմերի: 12,000 մարդուց բաղկացած ամբոխը կամենում էր արգելել այդ գործը և, քարեր գցելով պոլիցիականների վրա, վիրաւորեց նրանցից մի քանիսին: Ժողովրդի մասին օրէնքը երկու անգամ կարդացվեցաւ ամբոխին և այնուհետև զօրքերը նրան ցրվեցին:

ԳԵՐՄԱՆԻԱ

Բերլինից հաղորդում են հետևեալը: Գերմանական ազգաբնակութիւնը կատարելապէս փախչում է իր հայրենիքից, այնպէս որ գերմանական ներքին գործերի մինիստրը „վարչական ճանապարհով“ փնտռում է ամերիկացի բարեկամներին, որոնք իբր թէ միջոց են տալիս գերմանացիներին Ամերիկա գաղթելու համար: Գաղթականութիւնը ահագին չափեր է ստանում: Անցեալ տարի գաղթականների ահագին թիւը ակներև էր, բայց այս տարի անհամեմատ աւելի է: Պրուսիայի մի քանի տեղերից այս տարվայ երեք ամիսների ընթացքում գաղթողների թիւը աւելի է, քան թէ անցեալ ամբողջ տարվանը: Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ միայն Համբուրգից 27,000 մարդ է գաղթել յունվար, փետրվար և մարտ ամիսների ընթացքում, իսկ Ամերիկայից հաղորդում են, որ այնտեղ իւրաքանչիւր շաբաթ 5,000 գաղթականներ են հասնում: Դժուար է դրա պատճառը ազգաբնակութեան շատանալը համարել և կառավարութիւնը սկսում է գաղթականութեան իսկական պատճառները փնտռել:

Հասկանալի է, որ կառավարութիւնը չէ կամենում խոստովանել—գաղթականութեան իսկական պատճառները, այն է ժողովրդի տնտեսական անմխիթար դրութիւնը և զինուորականութեան ճնշումը, որ ստիպում է ամբողջ ժողովրդին ապրել, աշխատել և արդիւնաբերել զօրքերի և զանազան զէնքերի կատարելագործման համար: Զը խոստովանելով այդ պատճառները, կառավարութիւնը առաջ փնտռում էր այն ընկերութիւնների գործակատարներին, որոնք պարապում են գաղթականներին ուղարկելով: Բայց ճիշդ խուզարկութիւնները ապացուցին, որ գործակատարները անշան դեր են խաղում գաղթականութեան գործի մէջ: Այդ պատճառով այժմ փնտռում են „ամերիկացի բարեկամներին», պնդելով, թէ նրանք են ստիպում գերմանացիներին դաւաճանել թանգագին հայրենիքին: Նորերումս ներքին գործերի մինիստրը մի շրջաբերականով հրամայեց վարչական պաշտօնատարներին տեղեկութիւններ պահանջել գաղթականների դրամական միջոցների մասին և իմանալ, թէ այդ միջոցները որտեղից են ստացված. արդեօք իրանք են փող ունեցել, գաղթականների ընկերութիւնների գործակատարներից են ստացել, ամերիկական բարեկամներից են ստացված, և վերջապէս գաղթականները առհասարակ ունե՞ն արդեօք բարեկամներ Ամերիկայի մէջ:

Առասպելական ամերիկական այդ բարեկամները և ընդդիմադրական մամուլը ներքին գործերի մինիստր Պուտկամերի թոյլ կողմն են կագմում: Գրեթէ միաժամանակ գաղթականներին վերաբերեալ շրջաբերականի հետ մի ուրիշն էլ ուղարկված է նահանգները, որ արգելում է պաշտօնական անձանց թղթակցել լրագիրներին: Հակառակ դէպքում պաշտօնեաները ենթարկվելու են վարչական տուգանքների: Ուրեմն կարելի է յուսալ, որ Գերմանիայի մէջ շուտով կը սկսվի թղթակիցներին հալածելը:

Երևելի փիլիսոփաների հայրենիքի մէջ սկսել են երևալ այնպիսի մարդիկ, որոնք քարոզում են, թէ „հրէական հարցը կարող է միայն այն ժամանակ լուծվել, երբ հասարակութիւնը պատերազմ կը յայտնի մարդկութեանը վնասող եղբայրութեան և հաւասարութեան սկզբունքներին:“ Այդ տեսակ մարդիկ քարոզում են պատերազմել հաւասարութեան գաղափարի դէմ, հաւատարիմ մնալու համար սիրոյ և համայն մարդկութեան եղբայրութեան վարդապետութեանը, որ չէ զանազանում միմեանցից մարդիկներին և ազգութիւններին...

Եւ այդ բանը քարոզում է Գերմանիայի որդին, այն երկրի որդին, որ ստեղծել է Կանտին և մի շարք երևելի փիլիսոփաների:

ԻՏԱԼԻԱ

„Riforma“ իտալական լրագրի մէջ տպված է Գարիբալդիի հետևեալ նամակը մայիսի 12-ից: „Ես Ֆրանսիայի բարեկամ եմ և հարկաւոր եմ համարում ամեն բան անել նրա բարեկամութիւնը պահպանելու համար: Բայց ես ամենից առաջ իտալացի եմ և պատրաստ եմ զոհել կեանքիս մնացորդը արգելելու համար, որ Իտալիային վիրաւորանք չը հասցնվի: Եթէ մենք թոյլ տանք Ֆրանսիային նուաճել Ցունիսը, այդ ոչ թէ միայն անարգանք կը լինի Իտալիայի համար, այլ և կը սպառնայ նրա շահերին և ապահովութեանը: Ես չեմ կորցնում իմ յոյսը, որ Ֆրանսիան կը բաւականանայ մի քանի իր հպատակների սպանողներին պատժելով և կը հեռանայ առանց ձեռնամուխ լինելու Ցունիսի անկախութեանը, նրան իր հետ միացնելով, կամ նրա վրա տարածելով իր գերիշխանութիւնը: Այսպէս թէ այնպէս մեր պատերազմական նաւատորմը այժմ Ցունիսի ծոցի մէջ պէտք է լինի մեր բազմաթիւ գաղթականներին պաշտպանելու համար: Նոյն նպատակի համար մեր կղզիների հարաւային ափերի վրա պէտք 50,000 զօրք կենտրօնացնել պատերազմական բոլոր անհրաժեշտ պատրաստութիւններով“:

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

Փարիզ, 22 մայիսի

Ընթերցողներին անյայտ չէ այն գլխաւոր հարցերից մինը, որ երկար ժամանակ զբաղեցնում էր ամբողջ Ֆրանսիային և Եւրոպային. Այս հարցը ընտրութեան նոր ձևն էր՝ առաջարկված պատգամաւոր Բարդուի կողմից, որին ջերմ պաշտպան էին օպպորտունիստները — Գամբէտայի կուսակցութիւնը: Ընթերցողին աւելի պարզ ցոյց տալու համար թող ներվի ինձ փոքր ինչ երկարօրէն խօսել այս մասին, որով աւելի հեշտ կը լինի հասկանալ թէ ինչումն է կայանում այս խնդիրը և թէ մինչև հիմա ինչ էր:

Մինչև հիմա պատգամաւորների ընտրութիւնը լինում էր Scrutin d'arrondissement—սկրիտէն դ'առօնդիսըման—կոչված ձևով. այսինքն քաղաքի մի մասի բնակիչները ընտրում էին իրենց միջից մի պատգամաւոր— ներկայացուցիչ, որի ընտրութեան մէջ այլ քաղաքամասի բնակիչները չէին խառնվում օրէնքի տրամադրութեամբ: Այս բանը շատ էր արգելում հասարակապետականների ընտրութիւնը, որովհետև յեսուադէմները, օրինականները, բօնապարտեանները կարողանում էին մեծամասնութիւն կազմել միւսների վնաս հասարակապետութեան. հէնց այս պատճառով պատգամաւորը կամայ ակամայ խաղալիք էր դառնում մի քանի դրամատէրերին, վախենալով որ վերընտրութեան ժամանակ սև քուէ կը տանայ, հետևապէս օրինաղանցութիւններ էին պատահում ընդհանրապէս: Որպէս զի վերջ դրվի այս անկարգութիւններին, յառաջադէմները մտածեցին Scrutin de liste-ի ձևը, այսինքն ցուցակով կամ ցանկով ընտրութիւնը. այս տեսակ ընտրութեան մէջ կը մասնակցեն բոլոր քաղաքամասերի բնակիչները, որը կը վերջանայ հասարակապետութեան օգտին: Երբ որ վերոյիշեալ ձևը առաջարկվեց, այստեղի շատ կուսակցութիւններ վրդովեցան, մանաւանդ ռամկապետականները Գամբէտայի մասը մէջը տեսնելով և սկսեցին սաստիկ կերպով հարուածել իրենց օրգաններում, ասելով թէ Գամբէտտան իր համար դիկտատորութիւն է պատրաստում և ուզում է կարգադրութիւնը բոլորովին իր ձեռքը անցնելով, հռօմէական կայսր դառնայ մեր գլխին: Արմատականները հակառակ էին պնդում, le Rappel լրագիրը ցոյց տուեց ժամանակագրութեամբ, որ 1840 թուից սկսած մինչև 1870 թիւը քանի անգամ որ հասարակապետութիւնը վերականգնել է, միշտ ընտրութիւնը եղել է ցուցակներով, և շատ իրաւացի կերպով բացականչում է պարոն յոդուածագիրը, թէ ինչու հիմայ չենք կարող մի և նոյն ձևը գործածել:

Ինչպէս վերևը ասացի, այս հարցին դէմ էին ռամկապետականները. այն ինչ բօնապարտեանները և այլ յեսուադէմ կուսակցութիւնները համամիտ էին, ինչպէս ընթերցողը կը տեսնէ. նոյն իսկ յառաջադէմները խոստովանվում են՝ որ այս ձևով մի քանի նահանգներ կը կորցնեն, բայց ընդհանրապէս շատ և շատ կօգուտ: Ի հարկէ, Գամբէտտան իր խելքով, ճարպիկութեամբ, քաղաքագիտութեամբ, գործունէութեամբ, անխոնջ աշխատասիրութեամբ հասել է այն դրութեանը, որ իր ասած ամեն մի խօսքը կատարվում է. ուրեմն հասկանալի է մի քանի տաք գլուխների ծայրայեղ կատաղութիւնը սրա դէմ. վերջապէս վերոյիշեալ հարցի հերթը հասաւ ամսոյս 19-ին. նշանակված օրը, լրագիրների պատմածին նայելով, պատգամաւորների պալատը լցվել է անհամար բազմութեամբ և յուզմունքը քաջած անհամբերութեամբ սպասելիս են եղել հարցի վճռին. Մի քանի ճառախօսներից յետոյ խօսում է ինքը Գամբէտտան շատ ազդու կերպով, ապա հետևում է քուէարկութիւնը, ախրեցնելով և ուրախացնելով հանդիսականներից շատերին, որոնք մինչև անգամ գրազ էին եկել յաջողվելու և չը յաջողվելու մասին: Ինչ երկարեցնեմ խօսքս, Գամբէտտա և իր կուսակցութիւնը յաղթող են հանդիսանում. այս քուէարկութեան միւս օրը մի զարմանալի տեսարան էր ներկայացնում Փարիզը, կարծես թէ Ֆրանսիացիք մոռացել էին բոլոր-

պէս խրումիրներն և Թունիզի հարցը. հաստատապէս կարելի է ասել որ ամէն մարդ մի քանի օրագիր առել կարդաց այն օրը։ Գամբէտտայի ճառախօսութիւնը բոլոր լրագիրները, մի քանի բացառութեամբ, տպեցին իրենց էջերում. այս յաղթութեան պատճառով, սոցիալիստները, Ռոշֆորը և խեղճ Լուիզ-Միշէլը իրենց համախոհների հետ միասին քթերը կախ են գցել և չատ տխուր են։ Թէև նամակս երկարում է բաւական, բայց դէպ եմ համարում մի քանի լրագիրների կարծիքները մէջ բերել. ահա թէ ինչ են ասում մի քանիսը իրենց օրգաններում։ La Véritée նոր այրուցած կնոջ նման է լալիս և ասում որ բանը վերջացած է արդէն, օգնել չէ կարելի. մենք չէինք կարծում որ փարիզեցիք այդ ատիճան միամիտ կը լինէին Գամբէտտայի լաբախաղացութիւնը չը հասկանալու համար։

Բօնապարտեականների տակի մասխարա Պոլ-դը Կասանեակը կարծում է մեծ բարերարութիւն է արել Գամբէտտային ցուցակներով ընտրութիւնը քուէարկելով և ուզել է նրան թագաւոր անել ահա ինչպէս։

«Մենք չենք պատկանում այն տեսակներին, ասում է պարոնը, որոնք ընդունում են սխալ և անուղիղ ճանապարհ և մենք կարծում ենք որ եթէ մի դժբախտութիւն կարող էր հասնել Ֆրանսիային, այդ կը լինէր մի քաղցր, բարի և ազնիւ մարդու նախագահութիւնը, որին մենք միշտ յարգել ենք և որը կոչվում է Ժիւլ-Գրեվի։ Որպէս զի հասարակապետութիւնը մնայի, որպէս զի աշխարհս չորս կողմից բարձրացող քամին կարողանայ աւելել նրան, պէտք է որ նա սանձարձակվի, պէտք է որ նա ազատ լինի արկածից արտաքուստ և ներքուստ, պէտք է որ նա անսանձ և անսահման կերպով գործէ բոլորը իր կամքի համեմատ, յանձնի իրան ամէն վատութեան և վերջապէս թաւազների խայտառակութեան մէջ։ Կայուն հասարակապետութիւնը մեզ սպառնում էր լքումն, մահ և երկիւղալի վախճան։ Բայց անցաւ ժամը և նա յանձնվելով հերարձակ, խելացնոր ինչպէս հիստերիկով հիւանդ լկտի աղջիկ, իր կոպիտ պաշտպաններին, որոնք ահա տասը տարի շարունակ փաղաքշում են— caresser—առանց նրան դաղրեցնելու։ Այս ամօթալի կապի վկայ կը լինեն այսուհետև արեգակը և լոյս ցերեկը իր գործակիցը. մենք սպասում ենք դրանից պիղծ արտադրութիւն, մեզ օգտաբեր է զգուանք և կը լինենք դրա չարագուշակները։ Ահա թէ ինչու համար քուէարկեցինք ցուցակներով ընտրութիւնը։»

Ցարգելի ընթերցողը չը պիտի տխրիչ անկասկած, կարդալ Պոլ-դը-Կասանեակի պէս փծուն լեզու գործադրողների կարծիքը, ինչպէս Ռոշֆորինը, թէև պարոնը չէ պատկանում յետադէմներին. ինչ կը վերաբերի հասարակապետական օրգաններին, մեծ համակրանքով են խօսում այս մասին և շնորհաւորում են յաղթութիւնը Գամբէտտային, մի խօսքով այս վճիռը նման էր կատուի հարսանիքին և մկների մահին։ Սի քանի այրված սրտեր կարծում են որ այս վճիռը կը մերժվի Սենատում, իսկ մենք ընդհակառակն ասք կարծում, որովհետև նոյն իսկ այնտեղ շատ կուսակիցներ ունի այս վճիռը։

Այս նամակով տեղեկութիւն եմ տալիս մի քանի մասին, որը, իմ կարծիքով, մեծ ուրախութիւն պէտք է պատճառէ բոլոր հայրենասէր և ճշմարիտ ազգասէր մարդոց. թող հայ խմբագիրները և հասարակութիւնը ուշադրութիւն դարձնեն այս հանգամանքի վրա, դատեն և քննեն ուշի ուշով և հասկանան վերջապէս թէ ինչքան օգտաբեր կը լինի իրենց եթէ յաջողեցնեն գլուխ բերել այս բանը։

Ահա թէ ինչումն է կայանում գործը. երէկ բախտի բերմունքով պատեհութիւն ունեցայ ներկայ գտնվիլ արդէն հայերին լաւ ծանօթ պարոն Դիւլօրիէի դասախօսութեանը, ուր գտնվում էին մի քանի հայ երիտասարդներ, որոց մէջ գտնվում էր նաև հայր Խորէն-Սահմանէն։ Դասախօսութիւնից յետոյ հ. սուրբը դիմեց պարոն Դիւլօրիէին հետեւեալ խօսքերով.—դուք երկար ժամանակ է որ հայերի վրա գրելուց դադարել էք, այլ ևս ոչինչ չէք ասում այս թշուառ ազգի մասին։ Ձեր խօսքը մեզ համար թանդ արժէ և հաւատացած եմ որ ձեր ձայնը լսելի կը լինի լուսաւոր Եւրոպային։

Պարոն Դիւլօրիէն գժգոհութիւն յայտնեց իրաւացի կերպով ասելով, որ ինքը արդէն գրաւոր կերպով դիմել է Կ. Պոլսի հայոց ազգային ժողովին և խնդրել է, որ օգնեն իրեն որ և է կերպով փարիզում հիմնել մի օրգան—ի հարկէ ֆրանսերէն լեզուով—որը կը զբաղվէր միայն հայոց խնդրով և դատի պաշտպանելով, բայց ազգային ժողովի կողմից ոչինչ քաջալերութիւն չէ ստացել։ «Մինչև անգամ, ասում է պարոնը, ես պատրաստ էի ամենայն սիրով կատարել առաջարկութիւնս, եթէ ազգային ժողովը բարեհաճէր գոնեայ 200 բաժանորդ մատակարարել ինձ։ Իսկ թէ կուզէք, տուէք ինձ 200 բաժանորդ, խօսենք և դատենք այս մասին և հաւատացած եղէք որ շուտով կը յաջողի մեզ այս բանի իրագործելը։» Իմ կարծիքով մեծ ամօթ կը լինի մեզ համար թէ չուզենանք օգտվել այս հանգամանքից՝ քանի որ մարդը ինքն է առաջարկում և ինչպէս իր խօսքերից կարելի է հասկանալ, մինչև անգամ այստեղի նշանաւոր արեւելագէտ անձինք կաշխատակցեն այս գործում։

Դարձեալ կրկնում եմ, թող ուշադիր լինեն այս բանին հայ առաջաւոր և ձեռնհաս մարդիկը, թող հայ խմբագիրները համաքարոզ—propagande—կարդան հասարակութեանը այս իրագործելու և թող Թիւրքիայի հայ ժողովուրդը համոզված լինի որ կը քաղէ անպատճառ իր ցանկացած պտուղները։

Լանդիշ

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 16/28 մայիսի

«Մշակն» մի հեռագիր էր տպած Կ. Պոլսէն ծանուցանելով իմ անուանումս իբր առենապետ տնօրէն ժողովոյ Միացեալ Ընկերութեանց։ Սոցա հետեւեալ նիստին մէջ մի պայման առաջարկեցի, որոյ ժողովին կողմանէ յետաձգումն հարկադրեց զիս չընդունել առ այժմ այդ պաշտօնն։ Ներփակեալ կուղարկեմ ձեզ այս առաջարկութեանս պատճէնն «Մասիսէն» կրկնված, որտեղ իմ պրոգրամս յայտնած եմ. զի սա է եղել ոչ միայն միշտ իմ համոզումս, այլ և այս տեղի հասարակութեան ուշիմ մասին միտումն։

Ազգային ընկերութեանց մի դրական ուղղութիւն տալն հասարակային կարծեաց մի հոսանքն է այսօր, որու դէմ մաքառելն անհնարին է. և այս քարոզութիւնն որ կանենք մի քանիքս ուրիշ արժանիք չունի, այլ այն որ կը հասկանամք ուրիշներէ յառաջ այդ հոսանքին ուղիղ ընթացքն և փութով կը հետեւիմք նորա։

Իմ այս առաջարկութիւնն արտատպելով հրաժարմանս բուն պատճառն յայտնած կը լինիք, և այսպիսով առաջն կառնուք այն մեկնութեանց որ կարէ սա տեղի տալ, մեկնութիւնք որք գուցէ խիստ նպաստաւոր չը լինին Միացեալ ընկերութեանց այժմեան կացութեանն մասին։ Սա ինչ ուղղութիւն և ունենայ պէտք է որ ապրի սակայն, որպէս զի վաղ կամ անադան յաջողիմք այնպիսի մի կերպով գործել տալ նորա, որ ազգն իրականապէս օգտի եղած զոհողութիւններէն։

Դոկտոր Տ. Փէշտիմալճեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրէժ, 5 մայիսի

Անցեալ ամսի 15-ին մեր առաջնորդ Գրիգոր սրբազանի կարգադրութեամբ Արամեան դպրոցի աշակերտները իրանց ուսուցիչներով ներկայացան Ատրպատականի նոր նահանգապետ Լմիր-Նիզամին, որը այդ միջոցին արքունական պարտիզումն էր և հեռագրական գծերով խօսում էր Նորին Վեհափառութեան շահի հետ։ Երբ որ աշակերտները հասակի կարգով շարվեցան լճակի եզրը, Նորին վեհութիւնը իր սենեակի պատուհանից դուրս նայելով, մի քաղցր հայեցվածք ձգեց դէպի աշակերտները և հայազգի գլխաւոր Ցատուր խանի միջոցաւ նրանց առողջութիւնը հարցնելուց յետո, ուսուցիչներին հրաւիրեց իր սենեակը, որտեղ, նա առանձին առանձին ծանօթացաւ նրանց հետ և հարցրեց, թէ նրանք ինչ առարկաներ են սովորեցնում, պատուիրելով որ աւելի ուշք դարձնեն ուսման վրա։ Դրանից յետ Լմիրը դարձաւ դէպի կրօնուսոյց Տէր-Յովսէփ. ա. քահանային, որին նստացրել էր իր առաջը, այսպիսի խօսքերով. «Դուք առանձին ուշադրութիւն դարձրէք դպրոցի և աշակերտաց վրա, աշխատեցէք արժանաւոր կրթութիւն տալ նրանց, ես միջոց չեմ գտնում, եթէ ոչ անձամբ պէտք է գայի դպրոցը և աշակերտներին տեսնելու»։ Այս խօսքերից յետ Լմիրը հրամայեց գներալ Կուլի խանին վճարել ուսուցիչներին 30 թուման պարգև, որ նոյն րոպէին ստացվեցաւ։ Դպրոցի հոգաբարձուներից ներկայ էին Ասրի-բէկ Միքայէլեանց և պ. Մարգար Նազարբեգեանց։

Նոր նահանգապետ Լմիր-Նիզամը, որ առաջ ասվում էր Էլա-Էդ-Դովլէ, մի զուարթ և գեղեցկադէմ անձնաւորութիւն է, մօտ 60 ամեայ, մի հմուտ և գործունեայ մարդ, հռչակաւոր Ղէջարեան ցեղից—այժմեան տիրող վեհապետի ցեղից։ Այս ցեղը Պարսկաստանի բոլոր իշխանական տոհմերից ամենաերեւելին է, և դրա համար ասվում է Բաշ-ղաջար, այսինքն ամենիւ կամ գլխաւոր ղէջար։ Նորին վեհութիւն—Լմիրը՝ շահի մոտերիմն է և խորհրդականը։ Բացի դրանցից, նա լինելով պալատական դրանիկներից ամենագլխաւորը, իր հաւատարիմ ծառայութիւններով ընդ միշտ սիրելի է եղած շահին, նրա գահակալութիւնից մինչև այսօր, որ երեսուն տարուց աւելի է։

Այս օրերս քրդական հարցը կրկին յարուցվեցաւ, այլ ընդ այլոց խօսքեր և զրոյցներ լսվում են բերանացի և գրաւոր։ Շէյխը՝ ինչպէս երևում է, դարձեալ պատերազմական պատրաստութիւնների մէջ է. Թիւրքաց կառավարութիւնը կամ չը կարողացաւ նրան բռնել, կամ կամք չունի նրան բռնելու, որ աւելի հաւանական է։ Լսում ենք որ դեռ նոր՝ Թիւրքաց կառավարութիւնը 27 հազար զօրք պէտք է ճանապարհ հանէ դէպի Վան, որոնք այդ կողմերը հասնելով պէտք է քրդերի ապստամբութիւնները զսպեն։ Շահի հօրեղբայր Սուլթան Մուրադ Միրզան, որ ասվում է Լստամբլ Սելիմէն. Մէքքէի ուխտագնացութեան պատճառով գտնվում էր Կ. Պոլիս, մօտերս վերադառնալով Թաւրիզից անցաւ Թէհրան։ Նրա հետ գնում էր սուլթանի պալատական եավերներից Սուլէյման փաշան, որին սուլթանը ուղեկից էր տուել արքայազուն մեծ իշխանին Կ. Պոլսից մինչև Թէհրան։ Սակայն ասողներ կան, որ այդ փաշան գնում է մասնաւոր իշխանութեամբ, իբրև արտակարգ դեսպան (envoyé éxtrordinaire) պարսից և Թիւրքաց սահմաններում եղած գժտութիւններին վերջ տալու համար։ Տեսնենք ինչ է լինում պարսից կողմից։ Անցեալ տարուանից՝ արդէն պարսիկները մի հսկող բանակ թողած էին սահմանում՝ Բրդստանի հանդէպ, այս մօտ օրերս մի ուժեղ զօրաբաժին ևս Թէհրանից եկաւ, որ կրթեալ զօրքերից է բաղկացած մօտ 10 հազար ձիաւոր, հետեակ և թնդանօթաձիգ, որոնք զինված են նոր հրացաններով և հետզհետէ, որպէս լսում ենք, պէտք է գան մի այդչափ էլ և գնան Խոյ, Սալմաստի և Ուրմիու կողմերը։ Մի քանի օրից յետոյ Թաւրիզի դաշտերից մէկում կը լինի մեծ զօրահանդէս և զինաշարժութիւն Լմիրի և մեծամեծ պաշտօնականների ներկայութեամբ, թնդանօթները պէտք է գոռան և հրացանները որոտան մի քանի ժամ։ Երկու կողման այս բոլոր զինուորական պատրաստութիւնները և զգուշութիւնները նկատելուց յետոյ, կարելի է ենթադրել որդեօք, որ այս բոլորը լինում են միայն ցոյցի համար։ Կարելի է ենթադրել արդեօք, որ այս բոլորը լինում են միայն մի Շէյխ բռնելու համար։ Կարելի է ենթադրել արդեօք, որ այս բոլորը կը ծագեցնեն երկու տէրութիւնների մէջ մի արիւնահեղ պատերազմ։ Հարկաւ սրանք դիւանագիտական աքօղեալ գաղտնիքներ են, մեզ համար մութն և անհասկանալի, որ ամենուրեք մութիկ ապագան պէտք է լուծէ։

Մեր քաղաքի հայ հասարակութեան գործերը կարծես կանգնել են, էլ դէպի առաջ չեն ընթանում, նախկին հոգաբարձուները հրաժարված են։ Նրանց տեղ երեք հոգի նորից ընտրվեցան, սրանք էլ անդրալի կերպով գործերից քաշվածի պէս եղան։ Այժմ միակ գործունեայ անձն առաջնորդն է մնացել, նա էլ գուցէ շուտով կերթայ Սալմաստ, անցեալ տարուանից իր ձեռնարկած մի քանի գիւղական դպրոցները կարգի դնելու համար։ Աւարայրեան օրիորդաց դպրոցի վարժուհին քաղաքիցս հեռացած է, առայժմ այդ դպրոցում դասերի շարունակութիւնը մնացել է Տէր-Յովսէփ բարեկրօն քահանայի վրա։ Այժմ դիտաւորութիւն կայ Թաւրիզում մի առանձին արական մասնաւոր դպրոց—մի պանսիոն բացանել։ Այդ դպրոցը մասնաւոր է, մի քանի վաճառականներ իրանց հաշուով բերել են տալիս մի ուսուցիչ՝ իրանց զաւակաց կրթութեան համար։

Մեզանում մարտ և ապրիլ ամիսները ամբողջապէս անձրևային անցան, մենք այժմ ունենք մի խիստ հազուադիւտ գարուն։ Առատութեան ձայնը լսվում է ամեն բերանից։ Ժողովուրդն այն աստիճանի հիացած է ներկայ տարուայ բուսեղէն թագաւորութեան վրա, որ այժմեանից սկսել է կասկածել, թէ անպատճառ այս տարի հունձքին մի վնաս կը հասնէ, կամ մորեխ կը գայ, կամ քիւրդերը կը թալանեն, կը կողոպտեն և կամ մի սարսափելի կարկուտ բոլորը կը փչացնէ։ Եթէ դրանցից ոչ մէկն էլ չը պատահի, ասում է ռամիկ ժողովուրդը, մի անակնկալ դէպք բոլորը կը լափէ. որովհետև մի այսպիսի առատ տարի հազիւ թէ կը պատահի։ Մեր ժողովրդեան այսպիսի կասկածանքները ինձ յիշել են տալիս այստեղ՝ մի վաղեմի անցք, որ լսել եմ մի ծերունու բերանից։ «Ղարադաղ գաւառում մի տարի լինում է մի խիստ գեղեցիկ գարուն, նրանից յետ գալիս է ամառը, կալերը դեղնում են և հասունանում և հանում են մարդահասակ բարձրութեան։ Մի հայ գիւղացի պատահմամբ անցնելով մի կալի մօտից, տեսնում է ցորենի հասկերի հերանց գնալը, ինչպէս դա պատահում է քամու ժամանակ, սկսում է կասկածել՝ թէ չը լինի մեր արտերը փախչում են մեր ձեռքից, որպէս զի մենք նրանց առատութիւնը չը վայելենք։ Այս մտածմունքով գիւղականը վազում է իրանց գիւղը և չավ գցում այսպիսի աղաղակներով։ Գիւղացիներ, քաջեր, ինչ էք չինում, օգնութեան հասէք, կորած ենք, մեր արտերը փախչում են։ Ինչպէս պատմում են այդ գիւղացիք առհասարակ խենդուկներ են լինում, որոնք առանց երկար մտածելու իսկոյն խոր հարդ են անում իրանց մէջ և որոշում, որ առաջ գնան իրանց գիւղի մէջիքի արտն ազատեն, ենթադրելով որ նա յաճախ հիւրեր է ունենում, նրան է շատ կարեւոր ցորեն ունենալը, իրանց ինչպէս որ լինի, մի կերպով կապրեն. այս ասելուց յետոյ, մանում են իրանց տները, և որքան որ ձեռք է ընկնում կարպետ փալաս, իշի համեա և այդպիսի բաներ, տանելով ծածկում են մէջիքի ամբողջ արտը, որպէս զի նրա տարեկան պաշարը ապահովեն։ Բայց մի քանի ժամից յետ երբ դադարում է հողմը, նրանք տեսնում են որ բոլոր կալերը կանգնած են անվանդ, իսկ մէջիքինը իրանք իրանց ձեռքով կոխոտել են և փչացրել մի չար բախտով։ Այս անցքը պատահել է Ղարադաղի մի հայ գիւղում։

Արմենակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Միսսօվայում մի բոլգարացի սօլդատ սպանել է մի ռուս օֆիցէրին, որ պաշտպանում էր իշխանի պահանջած փոփոխութիւնը։

—Վիէննայից հեռագրում են որ Բ. Դուբը ամրացնում է Վլօլօ և Արտա տեղերը։

—Լօնդոնից հեռագրում են որ անգլիական պաշտօնական թերթի մէջ յայտնված է, թէ Կիպրոս կղզին չէգոք կը յայտնվի, եթէ թշնամութիւններ ծագեն Անգլիայի և այն պետութիւնների մէջ, որոնց հետ Անգլիան այժմ բարեկամական յարաբերութիւններ ունի։

—Մարսէյլի դատարանը դատապարտել է Պաուլա Մինկ յեղափոխական կնոջը մի ամսվայ բանտարկութեան հակառուսական ցոյցերի համար, իսկ նրա ընկերներին մի քանի ամսվայ բանտարկութեան և մի քանի հարիւր ֆրանկ տուգանքի։

—«République Francaise» լրագիրը, որ ինչպէս յայտնի է Գամբէտտայի օրգանն է, սպառնում է ֆրանսիական սենատին, որ եթէ նա ընդդիմանայ ցուցակներով ընտրողական ձևի նախագծի ընդունելուն, այդ ընդդիմադրութեան համար նա կարող է վճարել իր գոյութեան գնով։

—Բէլգրադից հեռագրում են որ իշխան Միլան շուտով ուղևորվում է Բերլին։

—Կ. Պոլսից հեռագրում են. Բրիտանական նոր դեսպան լորդ Դէֆերինի Կ. Պոլիս հասնելուն պէս բանակցութիւններ կը սկսվեն Հայաստանի մէջ վերանորոգութիւններ մտցնելու մասին Բերլինի դաշնագրին համեմատ։